ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՔՐՄԱՆ և ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/2

ք. Դիլիջան «10» հունվարի 2018թ.

«Մոնթե մելքոնյանի անվան ռազամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս տնօրեն **Գ.Սարգսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Պռո ԷՄ ԷՍ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ս.Մելիքյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **է մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատունձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **70 000 001 /Յոթանասուն միլիոն մեկ/ ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրըՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որիմասով պայմանագիրը լուծվել է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերըլուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1

հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Պռո էմ էս» ՍՊԸ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1	ք. ԴիլիջանԳետափնյա 7, փ/կ 3903
,,Արարատբանկ,,	«Ամերիաբանկ» ՓԲԸՎանաձորմ/ճՀՀ՝
Հ/Հ1510042359830100	1570020187500100,
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ՝06948651
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան	**Գլխավոր տնօրեն՝ ՍուրենՄելիքյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	Կ.S.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[4] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով:*
Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1

«10» հունվարի 2018թ. կնքված

ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1

Մաքրման ենթակա են ,,Մոնթե մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան,, հիմնադրամի տարածքը (այդ թվում՝ հարակից) և առկա շենք-շինությունները: Մաքրման ծառայություններն իրականացվում են շաբաթվա բոլոր օրերին և տարբեր հերթափոխերով, ընդ որում՝

1-ին հերթափոխը ժամը 08:00-ից մինչև 17:00-ը մաքրում են հասարակական, վարչական (այդ թվում՝ բուժկետ) նշանակության և ընդհանուր օգտագործման տարածքները (այդ թվում՝ հարթակներ, հավաքակայան, շարահրապարակ, ճանապարհներ, մայթեր, արահետներ, կանաչապատ տարածքներ, ցանկապատին հարակից տարածքներ),

2-րդ հերթափոխը ժամը 09:00-ից մինչև 14:00-ն մաքրում են բնակելի (ննջարաններ) և մարզական նշանակության տարածքները,

1-ին և 2-րդ հերթափոխների թվակազմը՝ ոչ պակաս 60 հոգուց:

3-րդ հերթափոխը (ոչ պակաս 10 հոգի), ժամը 14:00-ից մինչև ժամը 20:00-ն իրականացնում են հերթապահություն՝ մաքրելով ընդհանուր օգտագործման տարածքները, իսկ անհրաժեշտության և առաջին իսկ պահանջի դեպքում՝ նաև 1-ին և 2-րդ հերթափոխերի համար նախատեսված տարածքների համապատասխան մակերեսները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում զուգարանի թղթը, թղթյա սրբիչները, հեղուկ օճառը, օդի հոտազերծիչները կատարողի կողմից տեղադրվում և անհրաժեշտության դեպքում փոխարինվում են նորերով անվճար:

ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

1. **Կենտրոնական մասնաշենքի հիմնական մաքրում**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.1 Մուտքային սրահներ, վերելակային նախասրահներ, կացարաններ,գրասենյակներ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում	Ամեն օր
Կատարել շրիշակների/պլինտուսների/ խոնավ մաքրում	Ամեն օր
Հավաքել և թափել զամբյուղների աղբը, փոխել մեկանգամյա պոլիէթիլենային փաթեթները	Ամեն օր
Մաքրել ջրակայուն ծածկույթով մշակված պատերի աղտոտված մասերը մինչև 2,5մ բարձրությամբ	Ամեն օր
Փայլեցնել ապակեպատ և հայելապատ մակերեսները	Ամեն օր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների փոշին և աղտոտված մասերը	Ամեն օր
Մաքրել կոշիկի ճաղադարակները	Ամեն օր
Լվանալ մուտքի դռների ապակիները մինչև 2,5մ	Ամեն օր

Մաքրել պատերի և միջնորմերի աղտոտվածությունները մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել պատուհանագոգերի, ցցուն մակերեսների, հրդեհային պահարանների, ջեռուցման սարքերի կեղտն ուփոշին մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամեն օր
Լվանալ հրդեհային աստիճանների դռների ապակիները	Շաբաթը 1 անգամ
1.5 Ծառայողական սենյակների մաքրումը	
Կատարել հատակի խոնավ մաքրում	Ամեն օր
Հավաքել և թափել աղբը	Ամեն օր
Մաքրել բոլոր հորիզոնական մակերեսների փոշին մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել աշխատանքային սեղանների /թղթերից ազատ մակերեսների, կողային մակերեսների/, պատուհանագոգերի, պահարանների, աթոռների/ներառյալ ոտքերի և հիմնական մակերեսի/ կեղտն ու փոշին մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել դռների, բռնակների, ջեռուցման սարքերի, պատերի կեղտն ու փոշին մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել բոլոր հորիզոնական և ուղղահայաց մակերեսների փոշին 2,5մ ավել բարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Լվանալ և ախտահանել աղբամանները	Շաբաթը 1 անգամ
1.6 Տեխնիկական սենյակների մաքրումը տեխնիկական անձնակազմի ներկայությամբ /օդափոխիչ խցիկներ, ջերմային կետեր, պոմպերի, վահանների, վերելակների մեքենայական բաժանմունքներ/	
Կատարել հատակի խոնավ մաքրում	Շաբաթը 1 անգամ՝ համաձայն ժամանակացույցի
Հավաքել և թափել աղբը	Ամեն օր
Մաքրել դռների, բռնակների, ջեռուցման սարքերի, հաղորդակցման խողովակների, օդաքաշիչների և պատերի կեղտն ու փոշին մինչև 1,7մ բարձրությամբ	Շաբաթը 1անգամ
Կատարել փափուկ կահույքի խոնավ մաքրում	Տարին 4 անգամ

2. Կենտրոնական մասնաշենքի ուսումնական մասի մաքրության ապահովում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2.1 Մուտքի սրահներ, վերելակային նախասրահներ, ուսուցչանոցի, դասասենյակներ, լողավազան,	
Մաքրել դասասենյակների ,ուսուցչանոցիևսրահներիհատակի տեղային	Ամեն օր

Մաքրել ցուցանակների, տեղեկատվական տախտակների և ցուցադրափեղկերի կեղտաբծերը 2,5մ ավել բարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Կատարել գորգերի վակուումային մաքրում	Շաբաթը 1 անգամ
Ձեռքովկատարելկաշեպատ կահույքիխոնավմաքրում	Ամեն օր
Մաքրել կեղտը և փոշին գրասենյակային սարքավորումների, սեղանների,պահարանների,աթոռների և այլ մակերեսների վրայից	Ամեն օր
1.2 Վերելակներ	
Կատարել հատակի խոնավ մաքրում	Ամեն օր
Փայլեցնելհայելիների ապակեմետաղյա մակերեսները	Ամեն օր
Լվանալվերելակների ներքին ապակիները	Ամիսը 1 անգամ
Մաքրել պատերի, դռների, առաստաղի, կառավարման վահանակի կեղտաբծերը	Ամեն օր
1.3 Սանհանգույցներ	
Ձեռքով կատարել հատակի և պատերի խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ամեն օր
Լվանալ լվացարանները, զուգարանակոնքերը, նստատեղերի երկու կողմերը, սանտեխնիկայի առբերման արտաքին մասերը	Ամեն օր
Հեռացնելդիսպենսերների և սարքավորումների կեղտաբծերը	Ամեն օր
Հավաքել և թափել աղբը, փոխել պոլիէթիլենային փաթեթները, մաքրել ու ախտահանել աղբամանները	Ամեն օր
Մաքրել և փայլեցնել հայելիները	Ամեն օր
Կատարել պատերի, միջնորմերի, դռների խոնավ մաքրում	Ամեն օր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամեն օր
Լվանալ հորիզոնական և ուղղահայաց մակերեսներն ամբողջ բարձրությամբ	Ամեն օր
Ապահովել զուգարանները ծախսային նյութերով /թղթե սրբիչներ, զուգարանի թուղթ, օդիհոտազերտիչ,հեղուկ օճառ/:	Ամեն օր
1.4 Պահեստային տարհանման աստիճաններ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում	Ամեն օր
Մաքրել բազրիքների, ճաղաշարերի կեղտն ուփոշին, փայլեցնել մետաղյա տարրերը	Ամեն օր
Հավաքել և թափել աղբը	Ամեն օր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների փոշին և աղտոտված մասերը	Ամեն օր

աղտոտված մասերը, կատարել խոնավ մաքրում	
Հավաքել և թափել աղբը	Ամեն օր
Մաքրել մետաղական կառուցատարրերի, ջերմապատվարների և ջրակայուն ծածկույթով մշակված պատերի տեղային աղտոտվածությունները մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել ապակե և մետաղական մակերեսների տեղային աղտոտվածությունները մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
2.2 Սանհանգույցներ	
Մաքրել հատակի տեղային աղտոտվածությունները, կատարել խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ժամը 1 անգամ
Մաքրել դիսպենսերների և սարքավորումների կեղտաբծերը	Ժամը 1 անգամ
Հավաքել և թափել աղբը, փոխել պոլիէթիլենային փաթեթները և մաքրել աղբամանները	Ժամը 1 անգամ
Մաքրել հայելիների և մետաղական մակերեսների աղտոտվածությունները	Ժամը 1 անգամ
Մաքրել պատերի, միջնորմերի, դռների կեղտաբծերը մինչև 1,7մ բարձրությամբ	Ժամը 1 անգամ
Վերահսկել ծախսային նյութերի առկայությունը /զուգարանի թուղթ, թղթե անձեռոցիկներ,օդիհոտազերտիչ,հեղուկօճառ,/ , դիսպենսերները համալրել ծախսային նյութերով:	Ժամը 1 անգամ
2.3 Վերելակներ	
Մաքրել հատակի աղտոտվածությունները	Ամեն օր
Մաքրել պատերի, դռների, կառավարման վահանակների աղտոտվածությունները	Ամեն օր

3. Մարզական մասնաշենքի հիմնական մաքրում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
3.1 Մուտքի սրահ, խմբային պարապմունքների դահլիճներ	
Կատարել հատակի խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ամեն օր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամեն օր
Հավաքել և թափել աղբամանների աղբը, փոխել միանգամյա պոլիէթիլենային փաթեթները	Ամեն օր
Մաքրել ջրակայուն ծածկույթով մշակված պատերի աղտոտվածությունները մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Փայլեցնել ապակեպատ և հայելապատ մակերեսները մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների փոշին և աղտոտվածությունները	Ամեն օր

Մաքրել կոշիկի ճաղաղարակները	Ամեն օր
Լվանալ մուտքի խմբի դռների ապակիները մինչև 2,5մ բարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Մաքրել ցուցանակների, տեղեկատվական տախտակների և ցուցադրափեղկերի կեղտաբծերը մինչև 1,7մ բարձրությամբ	Ամեն օր
3.2 Սանհանգույցներ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ամեն օր
Լվանալ լվացարանները, զուգարանակոնքերը, միզարանները, նստատեղերի երկու կողմերը, սանտեխնիկայի առբերման արտաքին մասերը	Ամեն օր
Մաքրել դիսպենսերների և սարքավորումների կեղտաբծերը	Ամեն օր
Հավաքել և թափել աղբը, փոխել պոլիէթիլենային փաթեթները, մաքրել ու ախտահանել աղբամանները	Ամենօր
Մաքրել և փայլեցնել հայելիները	Ամենօր
Մաքրելպատերի, միջնորմերի, դռներիկեղտաբծերի մինչև 2,5մբարձրությամբ	Ամենօր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամենօր
Լվանալ հորիզոնական և ուղղահայաց մակերեսներն ամբողջ բարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Զուգարաններն ապահովել ծախսային նյութերով /թղթե սրբիչներ,զուգարանի թուղթ,օդի հոտազերտիչ,հեղուկ օճառ/	Ամենօր
3.3 Պահեստային տարհանման աստիճաններ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում	Ամենօր
Մաքրել բազրիքների, ճաղաշարերի կեղտն ու փոշին, փայլեցնել մետաղյա տարրերը	Ամենօր
Հավաքել և թափել աղբը	Ամենօր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների փոշին և աղտոտվածմասերը	Ամենօր
Մաքրել պատերի և միջնորմերի աղտոտվածությունները մինչև 2,5մ բարձրությամբ	Ամենօր
Մաքրելպատուհանագոգերի, ցցունմակերեսների, հրդեհայինպահարանների, ջեռուցմանսարքերիկեղտնուփոշինմինչև 1,7մբարձրությամբ	Ամենօր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամեն օր
Լվանալհրդեհայինաստիճաններիդռներիապակիները	Ամենօր
3.4Տեխնիկականսենյակներիմաքրումըտեխնիկականանձնակազմիներկայությամբ /օդափոխիչներ, ջերմայինկետեր, պոմպերի, վահանների, վերելակներիմեքենայականբաժանմունքներ/	

Կատարել հատակի խոնավ մաքրում	Շաբաթը 1 անգամ՝ համաձայն ժամանակացույցի
Հավաքել և թափել աղբը	Ամենօր
Մաքրել դռների, բռնակների, ջեռուցման սարքերի, հաղորդակցման խողովակների, օդաքաշիչների և պատերի կեղտն ու փոշին	Շաբաթը 1 անգամ

4. Քոտեջների համալիր մաքրում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
4.1 Մուտքի սրահ, ննջասենյակներ, բնակելի սենյակներ, փոքր խոհանոցներ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ամենօր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամենօր
Հավաքել և թափել աղբամանների աղբը, փոխել մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային փաթեթները	Ամենօր
Կատարել գորգային ծածկույթի վակուումային մաքրում	Ամենօր
Մաքրել սեղանների, կողասեղանիկների, աթոռների հիմնային մասերի և այլ մակերեսների կեղտն ու փոշին մինչև 2,5 մբարձրությամբ	Ամենօր
Մաքրել ջրակայուն ծածկույթով մշակված պատերի աղտոտվածությունները մինչև 2,5մ բարձրությամբ	Ամենօր
Մաքրել ապակեպատ և հայելապատ մակերեսների աղտոտվածությունները մինչև 2,5 մբարձրությամբ	Ամենօր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների կեղտն ու փոշին	Ամենօր
Մաքրել կոշիկի ճաղաղարակները	Ամենօր
Լվանալ մուտքային խմբերի դռների ապակիները մինչև 2,5մ բարձրությամբ	Ամենօր
Մաքրել ցուցանակների, տեղեկատվական տախտակների և ցուցաղրափեղկերի կեղտաբծերը մինչև 2,5մ բարձրությամբ	Ամենօր
4.2 Սանհանգույցներ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանիչ լվացող միջոցներ	Ամենօր
Լվանալ լվացարանները, զուգարանակոնքերը, նստատեղերի երկու կողմերը, սանտեխնիկայի առբերման արտաքին մասերը	Ամենօր
Մաքրել դիսպենսերների և սարքավորումների կեղտաբծերը	Ամենօր
Հավաքել և թափել աղբը, փոխել պոլիէթիլենային փաթեթները, մաքրել ու ախտահանել աղբամանները	Ամենօր
Մաքրել և փայլեցնել հայելիները	Ամենօր

Մաքրել պատերի, միջնորմերի, դռների կեղտաբծերը մինչև 2,5 մ բարձրությամբ	Ամենօր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամենօր
Լվանալ հորիզոնական և ուղղահայաց մակերեսներն ամբողջբարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Զուգարաններն ապահովել ծախսային նյութերով /թղթե սրբիչներ, զուգարանի թուղթ, օդի հոտազերտիչ,հեղուկ օճառ/	Ամենօր
4.3 Աստիճաններ, միջանցքներ, նախասրահներ	
Ձեռքով կատարել հատակի խոնավ մաքրում	Ամենօր
Մաքրել բազրիքների, ճաղաշարերի կեղտն ու փոշին, փայլեցնել մետաղյա տարրերը	Ամենօր
Հավաքել և թափելաղբը	Ամենօր
Մաքրել դռների փեղկերի, շրջանակների, պարակալների, չափաբերիչների փոշին և աղտոտված մասերը	Ամենօր
Մաքրել բոլոր հորիզոնական մակերեսների փոշին մինչև 2,5 մ բարձրությամբ	Ամենօր
Մաքրել պատուհանագոգերի, ցցունմակերեսների, հրդեհային պահարանների, ջեռուցման սարքերի կեղտն ու փոշին մինչև 2,5 մ բարձրությամբ	Ամենօր
Կատարել շրիշակների խոնավ մաքրում	Ամենօր
4.4 Ծառայողական սենյակների մաքրում	
Կատարել հատակի խոնավ մաքրում	Ամեն օր
Հավաքել և թափել աղբը	Ամեն օր
Մաքրել բոլոր հորիզոնական մակերեսների փոշին մինչև2,5մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել աշխատանքային սեղանների /թղթերից ազատ մակերեսների, կողային մակերեսների/, պատուհանագոգերի, պահարանների, աթոռների /ներառյալ ոտքերն ու հիմնային մասերը/, կեղտն ու փոշին մինչև 2,5մ բարձրությամբ	Ամեն օր
Մաքրել դռների, բռնակների, ջեռուցման սարքերի, պատերի կեղտն ու փոշին մինչև 2,5մ բարձրությամբ	Շաբաթը 1 անգամ
Լվանալ և ախտահանել աղբամանները	Շաբաթը 1 անգամ

5. Հարակից տարածքի համալիրմաքրում՝ ներառյալ շարահրապարակը,մարզադաշտերը,ավտոկայանատեղի, շենքիմուտքերը,սիզամարգերը

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
5.1 Ամռանը	
Բոլորշենք-շինությունների մուտքերի,մայթերի, արահետների, ճանապարհների, շարահրապարակի մարզադաշտերի մաքրում	Ամեն օր
Հավաքել աղբը	Ամեն օր
Մաքրել դրսի աստիճանների, շենքի պատվանդանի աղտոտվածությունները մինչև 1մ բարձրությամբ	Ամեն օր
Ձեռքով ավլել շարահրապարակի, մարզադաշտերի և ավտոկայանատեղի տարածքը	Շաբաթը 1 անգամ
Հսկել ճակատի և մուտքի խմբերի մաքրությունը /պոկել չթույլատրված հայտարարությունները, պիտակները, մաստակներըևայլն/	Ամեն օր
Թափել աղբամանների աղբը, փոխել փաթեթները	Ամեն օր
Մաքրել բեռնարկղների հրապարակները	Ամեն օր
Ջրել տարածքը	Ամեն օր
Մաքրել անձրևաջրի հորերի ճաղավանդակները հողե–ավազե ողողատներից և աղբից	Շաբաթը 1 անգամ
Խնամել բարեկարգության դեկորատիվ տարրերը: Մայթերը, եզրաքարերը, լուսավորության սյուները և կանթեղները պահել պատշաճ վիճակում:	Ամեն օր
Հնձելմարգագետինները, հետևելխոտայինծածկույթիպատշաճտեսքին:	Ամիսը 1 անգամ
Մաքրել տանիքը ամռանը	Շաբաթը 1 անգամ
5.2 Ձմռանը	
Մաքրել ձյունը՝ ձեռքով և մեքենայական եղանակով բոլոր շենք-շինությունների մուտքերի, մայթերի, արահետների, ճանապարհների, շարահրապարակի մարզադաշտերի մաքրում ձյունից և սարցաշերտերից:	Ամեն օր
Ջարդել սառույցը և մաքրել ձնե–սառցե գոյացությունները	Ամեն օր
Հավաքել–թափել և ավլել ձյունը	Ամեն օր
Հավաքել ձյունը դրա համար հատկացված տեղերում	Ամեն օր
Հետիոտնային գոտիները, կայանատեղիները մշակել հակասառցային նյութերով	Ըստ անհրաժեշտության
Հավաքել և թափել աղբամանների աղբը	Ամեն օր
Մաքրել բեռնարկղների հրապարակները	Ամեն օր

Մաքրել դրսի աստիճանների, շենքի պատվանդանի աղտոտվածությունները մինչև 1մ բարձրությամբ	Ամեն օր
Հսկել ճակատի և մուտքի խմբերի մաքրությունը /պոկել չթույլատրված հայտարարությունները, պիտակները, մաստակները/	Ամեն օր
Կազմակերպել ձնահեռացումը՝ ներգրավելով երրորդ անձանց	Ըստ անհրաժեշտության
5.3 Մասնագիտացված աշխատանքներ	
Ոչնչացնել կրծողներին և միջատներին	Համաձայն ժամանակացույցի
Լվանալ մուտքային խմբերի արտաքին ապակեպատ մակերեսները (0-ից բարձր ջերմաստիճանում)	Ամեն ամիս
Լվանալ արտաքին ապակեպատ մակերեսները և ճակատային մասը՝ ընդհանուր մակերեսով	Տարին 4 անգամ

Մոնթե Մելքոնյանի անվան վարժարան

Մաքրության բաժնի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ են հետևյալ մաքրող միջոցները՝

· Karcher CA30C- մաքրող հեղուկ տարատեսակ մակերեսների համար

· Karcher CA 10 C Extra -մաքրող հեղուկ սանհանգույցի համար

· Diversey Taski klonet extra- կոշտ մակերեսների մաքրման միջոց

· Diversey Taski R4 - կահույքի խնամքի նյութ

· Diversey Cif krem profesyonel -կոշտ մակերեսի մաքրման միջոց

· Diversey R 7-դժվար անցանելի հետքերի մաքրման միջոց

· Diversey Taski tapi extract- գորգերը մաքրելու միջոց

· Diversey Taski Jontec Tensol F3c- հատակը մաքրող միջոց

· Diversey Taski Actival- հատակը մաքրող միջոց

· Diversey Taski R 70 - աղային հետքերը մաքրող միջոց

· Diversey Tapi Spotex 2-փափուկ կահույքի վրայից տեղային հետքերը մաքրող միջոց

· Diversey Suma BAC D 10-ախտահանող նյութ

· Diversey Suma Inox D7-մետաղական մակերեսները փայլեցնող միջոց

· Diversey Taski good sense fresh- օդափոխիչ հեղուկ

Կամ համարժեք

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Միասնական անվանացանկի CPV կոդը	Գնման առարկան	Օրենքի մաքրման ենթակա տարածք, քմ	Գնման ժամանակացույց
1	90900000	մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայություններ	50 225	Ծառայության մատուցումը կիրականացվի 2018 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պռո էՄ էՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ ՀՀ՝
1570020187500100,
ՀՎՀՀ՝06948651
Գլխավոր տնօրեն՝ Սուրեն Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2

«10» հունվարի 2018թ. կնքված

ՄՄԱՈՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Միասնական անվանացանկի CPV կոդը	Գնման առարկան	Օրեկան մաքրման ենթակա տարածք, քմ	Վճարման ժամանակացույց
1	90900000	մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայություններ	50 225	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պռո էՄ էՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ ՀՀ՝
1570020187500100
ՀՎՀՀ՝06948651
Գլխավոր տնօրեն՝ Արմեն Մելիքյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.01.2018թ ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 կնքված պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու մասին

ք. Դիլիջան <<30>> հունվարի 2018թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Գ.Սարգսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պռո էՄ էՍ» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս.Մելիքյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող),մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով N ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրի 7.1 և 7.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին հաստատել N ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման և դրանց դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/գնման ժամանակացույց/ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սույն համաձայնագրում չնշված N ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.3 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև կնքված N ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«Պռո էՄ էՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1	ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
,,Արարատբանկ,,	«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ ՀՀ՝
Հ/Հ1510042359830100	1570020187500100,
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ՝06948651
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան	Գլխավոր տնօրեն՝ Սիրեն Մելիքյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված2
Հաստատված է
«10» հունվարի 2018 թ. կնքված
ՄՄԱՌԿ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրի փոփոխությամբ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	90900000	Հավելված 1	դրամ	70 000 001	1	ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1	31.12.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Պռո էՄ էՍ» ՍՊԸ
ք. Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ ՀՀ՝
1570020187500100,
ՀՎՀՀ՝06948651

Գլխավոր տնօրեն՝ Նուրեն Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
Հաստատված է
«10» հունվարի 2018 թ. կնքված
ՄՄԱՌՎ –ՀԲՄԾՁԲ-8/2 գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	90900000	մաքրման և սանիտարահիգիենիկ ծառայություններ	20 700000	20 700000	48 700 000	48 700 000	48 700 000	66 700 000	66 700 000	66 700 000	70 000 001	70 000 001	70 000 001	70 000 001

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
Քաղաք Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գեղամ Սարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պրո էՄ էՍ» ՍՊԸ
Քաղաք Դիլիջան Գետափնյա 7, փ/կ 3903
«Ամերիաբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ ՀՀ՝
1570020187500100,
ՀՎՀՀ՝06948651
Գլխավոր տնօրեն՝ Արտեմ Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.